ՄԵԾ ՀԱՅՔԻ ՏԱՎՐՈՒԲԵՐԱՆ (ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ) ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑԻ

Պատմ. գիտ. դոկտոր ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տավրուբերան կամ Տուրուբերան աշխարհը, որ իրավամբ հայ ժողովրդի ձևավորման կարևոր կենտրոններից մեկն է, հանդիսանում է Մեծ Հայքի այն երջանիկ երկրամասերից մեկը, որի աշխարհագրական մանրամասն նկարագրությունը «Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրության շնորհիվ հասել է մեզ։ Այնտեղ ասված է. «Դ աշխարհ՝ Տարուբերան, յելից Զորրորդ Հայոց, ունի գաւառս վեշտասան. զԽոյթ, զԱսպականունեաց ձոր, զՏարօն, յորում գայ գետըն Մեղ եւ անկանի յԵփրատ. որ ըստ հիւսիսոյ՝ Աշմունիք[1] առ Սրմանց լերամբ, որ կոչի Կատար երկրի. յորմէ յոյժ բղխեն աղբիւրք. որոց ըստ հիւսիսի՝ Սարդաղի առ Մեղեդուխ լերամբ[2], մինչեւ ցնոյն Այծպտկունս որ բաժանէ ընդ Կարին եւ ընդ նա. յորում գտանի սալակ եւ ձիզկ եւ նաւթ սեւ եւ սպիտակ. յորոյ յելից բխէ Մուրց գետ, գնալով ընդ հիւսիսի՝ իջանէ ի Բասեն գաւառ եւ խառնիյներասխ, եւ զետացուցանէ զնա։ Յելից Մարդաղոյ է Գաստովոր[3] գաւառ. եւ նորա յելից Տուարածատափ. նորա յելից Դալար. եւ ի հարաւոյ նոցա Հարք եւ Վաժնունիք[4], մինչեւ ցԱրածանի, որ իջանէ յԱպահունեաց. որոց ի հարաւոյ՝ Սարակ ի Բզնունեաց գաւառի[5], ի Նեխ Մասեաց սկսանելով՝ պատէ զարեւմտեայ եզր հոմանուն ծովուն, մինչեւ ցբերդն Բաղէշ, եւ անդր եւս ի հարաւ կոյս ցերէվարդ[6] գաւառի սահման։ Եւ Բզնունիք ունի յիւր հոմանուն ծովէն կղզիս երեք. զԱրձկեոյն, զՄիպանին եւ զՏոքեանն. որոյ ըստ հարաւոյ ի մէջ լերինն Տորոսի եւ ծովու՝ գաւառ Երէվարք, յորում լիճ՝ ինչ՝ որ կոչի Եղիգի, յուխից՝. զի ի վարելն յակօսն ջուր ըմպէ եզն, եւ սերմանեալն քառասուն աւրն հասանէ, եւ բերէ ընդ միոյ՝ յիսուն։ Եւ ծովն Բզնունեաց յերկայնն հարիւր մղոն է, եւ լայնն վաթսուն։ Որոյ ըստ հիւսիսոյ Աղիտովիտ[8] գաւառ, եւ զմտիւք նորա Ապահունիք. ընդ որոյ մէջն անցանէ Արածանի յեղրն Բզնունեաց։ Գտանի պստակ եւ կաստ... նոն որ է մաշկամիրգ, եւ մեղր անոյշ քան զամենայն երկրի եւ երկաթ։ Ասեն թէ՝ նհանգ[9] կայ յԱրածանի, որպէս յԵփրատ, զոր հաւաստի[10] գիտեմք, կեն-

---

1 Ձեռագրերում ավելի հաճախ հանդիպում է Արշամունիք ընթերցումը, որը համընկնում է այլ աղբյուրների տեղեկություններին։

2 Ճիշտ գրությունը՝ «առ Մեղեդուխ լերամբ» (Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի». Երևան, 1963, էջ 107)։

3 Դատելով մյուս ձեռագրերից, ճիշտ անվանաձևը Դասնաւորք է։

4 Ձեռագրերի մեծ մասում գավառանունը Վարաժնունիք է։

5 Թերևս այստեղ պետք է հաջորդեր «որ» շաղկապը։

6 Դատելով գավառի երկրորդ հիշատակությունից և «Աշխարհացույցի» մյուս ձեռագրերից, գավառանվան ճիշտ գրությունը Երևարք է։

7 Ս. Տ. Երեմյանը սրբագրում է «յուղխից» (նշվ. աշխ., էջ 108)։

8 Պետք է լինի «Աղիովիտ»։

9 Նհանգի վերաբերյալ տեղեկությունը Ս. Երեմյանը համարում է ուշ ընդմիջարկություն (նշվ. աշխ., էջ 108)։ Նրա կարծիքով, այդ առաջացել է Միջագետքում գոյություն ունեցող համանուն Արածանի գետի հետ շփոթելու հետևանքով։

10 Ս. Երեմյանը «հաւաստի» բառից հետո բնագրի մեջ մուծում է «ոչ» բառը (նշվ. աշխ., էջ 108)։

դանի քարքաշամ զուգեալ, պարիւնն ծծեալ եւ թողեալ, զոր ոմանք ասեն թէ պագան է եւ չէ դեւ, այլ գագան զոր Յոհան վասն դստերն Հերոդիադայ ասէ թէ քան զնհանգսն ծովայինս արիւնարբու էր»[11]։

Ավելորդ չենք համարում մեջբերել նաև «Աշխարհացոյցի» համառոտ խմբագրության տեղեկությունները. «Ծուրուբերան յերի կայ Չորրորդ Հայոց. գաւառք են ի նմա վեշտասան. Խոյթ, Ասպակունիք, Տարօն, Աշմունիք, Մարդաղի, Դասնաւորք, Տուարածատափ, Դալառ, Հարք, Վարաժնունիք, Բզնունիք, Երեւարք, Աղիովիտ, Այրահունիք, Կոր, Խորխոռունիք։ Ունի և ծով զԲզնունեացն լերկայն հարիւր մղոն, և ի լայն վաթսուն։ Ունի և գազպէն, և մեղր, և մաշկամիրգ, և սպիտակ նաւթ և երկաթ»[12]։ Սեսրոպ Սաշտոցի անվան Մատենադարանի հմր. 582 ձեռագիրը, որ հրատարակել է պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը, ունի որոշ տարբերություններ։ Աշմունիքին համապատասխանում են Արշամունիք, Դասնաւորքին՝ Դաստարաւորք, Տուարածատափին՝ Մուրածատափ, Կորին՝ Կորի, Խորխոռունիքին՝ Խորխորունիք տարընթերցումները, իսկ «ունի և գազպէն, և մեղր, և մաշկամիրգ, և սպիտակ նաւթ, և երկաթ» արտահայտությանը՝ «ունի եւ գազպէն, եւ մեղր, եւ մաշկամիրգ, եւ պիստակ, եւ երկաթ, եւ նաւթ» նախադասությունը[13]։

«Աշխարհացոյցի» համառոտ խմբագրության ձեռագրերը տալիս են գավառանունների տարընթերցումների մի նշանակալից քանակ, որի համեմատական քննությունը հնարավորություն է տալիս պարզել գավառանունների ճիշտ ձևերը։ Դրան ավելացնելով Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրական տվյալները, որ քաղում ենք Ղ. Ինճիճյանի երկից, ստանում ենք ներքոհիշյալ պատկերը.

Խոյթ, Խութ	Խոյթ
Ասպակունիք, Առպակասունիք, Սապակունիք, Ասպակունիկք, Ասպակոնիք, Առպկասունիք, Ասպատունիք, Ասպկտունիք, Ասպականունեաց ձոր[14]	Ասպակունիք, Ասպակունեաց ձոր
Տարուն, Տարաւն, Տարօն[15]	Տարաւն
Արշամունիք, Աշմունիք, Արշմունիք	Արշամունիք
Մարդաղի, Մարդո աղի, Մարդաղի, Մարդոյ աղի Մարդալի	Մարդաղի
Դաստարաւորք, Դասնաւորք, Դաստանորք, Դաստանաւորք, Դաստընաւորք[16], Դասնասորք, Դաստարուորք, Դաստնաւորք, Դաունաւորք, Դաստանսորք, Դասանաւորք, Գաստովոր	Դասնաւորք Դաս[տա]նաւորք Դաստարաւորք

11 Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 31–32։

12 К. П. Патканов. Армянская география VII века. СПб., 1877, с. 18.

13 Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1941, էջ 349։ Տե՛ս նաև Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 582 ձեռագիրը։

14 Մատենադարանի հմր. 1717 և 5613 ձեռագրերում Ասպակունիքը նույնացվել է Բռնաշենի և Շատախի հետ։

15 Մատենադարանի հմր. 1459 ձեռագրում գավառանունը բացակայում է։

16 Մատենադարանի հմր. 1717 և 1518 ձեռագրերում Դասնավորք գավառից առաջ գրիչները ավելացրել են Մանանաղի գավառի անունը։ Մարդաղիից հետո և Դասնավորքից առաջ Մատենադարանի հմր. 5120 ձեռագրում ավելացված են Համրպետք, Մանծեր, հմր. 2291-ում Հարքի կողքին լուսանցքում՝ Համրպետք, հմր. 1459-ում Համրպետքը հայտնվել է Դալառից հետո Մեծնկերտի հետ մեկտեղ, իսկ Աղիովիտից հետո գրված է անծանոթ Անծկէոտ անունը, որը թերևս Մանծկերտի աղավաղումն է։

Տուարծատափ, Տուարեատափ, Տուարծատաւի, Մուրծատափ, Ոուարծատափ, Մուրծայ տայփք, Տուարծափափ, Տուրարեատափ, Տուարերատափ, Տուարածատափ, Տուարածոյ տափ[17]	Տուարածատափ
Դալաու, Սալաու, Գղաւ, Գովաու, Դղաւ	Դալաու
Հարք, Հաուք, Հայք, Հաք	Հարք
Վարաժնունիք, Վարաժընունիք, Վարաժքնունիք, Վարժունիք, Վարժնունիք, Վաժնունիք.	Վարաժնունիք
Բղնունիք, Բժնունիք[18]	Բղնունիք
Երևարկ, Երևարք, Երիվարք, Երիվար, Երիվարգ, Երէվարդ, Երէվարք	Երէվարք
Աղիովտի, Աղիովիտ, Աղոյովիտ, Աղաւանլիս, Աղիովգի, Աղի ուլտի (ովտի)[19]	Աղիովիտ
Այպահունիք, Ապահունիք, Ապահանիտ, Այհունիք, Ապահունիք, Ահունիք[20]	Ապահունիք
Կորի, Կոր, Կորդ, Տկորի[21]	Կորի
Խորխոռունիք, Խորխորունիք, Խոռխոռունիք, Խորխորունիս, Խորխունիք, Խորխռունիք, Խուռխուռունիք[22]	Խորխոռունիք

Տավրուբերան կամ Տուրուբերան աշխարհի գավառների տեղադրությունը մեծ մասամբ հայտնի է ոչ միայն աղբյուրագիտական հարուստ նյութերի, այլև հայագետների կատարած քրտնաջան և բեղուն ուսումնասիրությունների շնորհիվ։ Փորձենք այժմ տալ դրանց տեղադրությունն ըստ նկարագրության հերթականության՝ կատարելով որոշ ճշգրտումներ։

Աշխարհի առաջին խույթ գավառը գտնվել է Բաղեշ քաղաքից առևմուտք, Արղան գետի վերին հոսանքի շրջանում, որն այդ վաղնջական ժամանակներում անշուշտ կրելու էր նույնպես խույթ անունը[23]։ Հիմնականում հայկական բնակչություն ունեցող խույթ գավառակում XIX դարի վերջին և XX դարի սկզբին նշանավոր սրբատեղի էր սուրբ Աղբրիկը, որից վերև տարածվում էր մի լայնատարած սարահարթ[24]։ Խույթի բնակիչների մասին հիշատակություն ունի Գևորգ Կիպրացին Γεωργιος — խութացիք անունով[25]։ Թումա Արծրունին հի-

17 Գավառը հիշում է Ղազար Փարպեցին Տուարծատափ անունով, տեղադրելով Բագրևանդի և Բասենի սահմանակցությամբ (Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան. Տփղիս, 1904, էջ 57)։

18 Մատենադարանի հմր. 1482, 1518 և 1770 ձեռագրերում գավառանունը բացակայում է։

19 Մատենադարանի հմր. 1482, 1518 և 1770 ձեռագրերը գավառանունը չեն պահպանել։

20 Մատենադարանի հմր. 1482, 1518 ԵՒ 1770 ձեռագրերը գավառանունը չեն պահպանել։

21 Մատենադարանի հմր. 1482, 1518, 1770 և 3941 ձեռագրերում գավառանունը բացակայում է։

22 Մատենադարանի հմր. 1482 և 1518 ձեռագրերում գավառանունը բացակայում է։ Բոլոր գավառանունների համար տե՛ս նաև Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 88—89։

23 Տե՛ս Ս. Տ. Երեմյան. Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298—385 թթ.), բարտեզ, Երևան, 1979, Գ—4։

24 «Սասուն», աշխարհագրական բարտեզով, կազմեց Ա. Քալանթար, արտատպված «Մշակ» լրագրից. Թիֆլիս, 1895, էջ 11։

25 Georgii Cyprii Descriptio orbis Romani, edidit praefatus est commentario instruxit Henricus Gelzer, Lipsiae, 1890, թ. 48. Հովհան Մամիկոնյանի երկի մի շարք ձեռագրերում հիշատակվում է «Մուշեղ, ղտերն Մշոյ և Խութայ, Տարօնոյ իշխանն և Սասնոյ», որտեղ

շատակում է Խոյթ լեռը, որի բնակիչները «յաղագս խրթնի եւ անհետազօտելի խօսիցն եւ բարուցն կոչին Խութ, յորոց անուն եւ լեառն Խոյթ անուանի» և բնակվում էին «ի լերինն, որ բաժանէ ընդ Աղձնիս և ընդ Տարոն»[26]: Խույթը, Խութեցիներին կամ լեռը հիշատակում են նաև Կիրակոս Գանձակեցին, Ասողիկը, Յակուտ ալ-Համավին և Բալաձորին[27]: Հ. Հյուբշմանը գտնում է, որ «Աշխարհացոյցը» իրավամբ Մոտիկանի կամ Մոտկանի հյուսիսակողմում գտնվող Խույթ գավառն ու նրան սահմանակից Տարոնը վերագրում է Տուրուբերան նահանգին, քանի որ Խոյթն ու Տարոնը Տավրոս լեռով բաժանվում են Սասունից և Սալնաձորից և որ Խոյթն ու Տարոնը Տավրոսի հյուսիսային կողմում են, իսկ Սասունը և Սալնաձորը՝ հարավային: Սակայն մյուս կողմից նա ստիպված է արձանագրել, որ Գևորգ Կիպրացու տեղեկությունները հակասում են հիշյալ եզրակացությանը, քանի որ դրանց համաձայն Աղձնիքում են գտնվել Տավրոսը, ՀԱՅՈՑՈՒՆՔ ԲԱՐՁՐՈՅՆ-ը, Սասունը և Խոյթը[28]: Փորձելով լուծել այս հակասությունը, գերմանացի հայագետը հայտարարում է, որ վերոհիշյալ տեղեկությունները վերաբերում են ոչ թե վարչական աշխարհագրական բաժանմանը, այլ ազգագրական ծանոթություն են տալիս Տավրոսի այն հատվածի վերաբերյալ, որը Աղձնիքին կից էր և ուր բնակվում են իրար ազգակից երկու ժողովուրդ՝ խութեցիները և Սանասնեայք[29]: Սակայն հակառակ հարգարժան հայագետի ունեցած աշխարհագրական պատկերացումներին, Խույթը բնավ էլ չի գտնվում Տավրոսի հյուսիսային կողմում, չնայած պետք է ընդունել, որ Խութ գավառակի հարավային սահմանագլխով ձգվող լեռնաբազուկը որոշ չափով ավելի բարձր է, քան վերջինիս հյուսիսով անցնող Հայկական Տավրոսի հիմնական լեռնաճյուղը, ուստի Խույթի պատկանելիությունը Տավրուբերանին բնաշխարհագրական տեսակետից, ըստ մեզ, պատճառաբանված չէ: Մակերևույթի առումով այն ավելի շատ վերաբերելու է Աղձնիքին, իսկ նրա վերաբերելը Տավրուբերանին, ինչպես ցույց տվեցինք Աղձնիքի բաժնում, հանդիսանում է որոշակի պատմավարչական իրողության արտահայտություն:

Տավրուբերանի հաջորդ շրջանը հայտնի է Ասպակունիք կամ Ասպակունյաց ձոր անունով: Ն. Ադոնցի կարծիքով Ասպակունիքը սկզբնապես մտել է Տարոնի մեջ և հանդիսացել Ասպականի իշխանական ընտանիքի տիրույթ: Սակայն Ասպակունյաց իշխանների վերաբերյալ սկզբնաղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել, իսկ «Աշխարհացոյցում» Ասպակունիքը սոսկ աշխարհագրական հասկացություն է, Խույթին սահմանակից լեռնահովիտներից մեկի վերնագավառը[30]: Այդ ճիշտ հայեցակետը հիմք ընդունելով՝ Ասպակունիքի համար միանգամայն տրամաբանական և համոզիչ տեղագրություն է առաջարկել Ս. Երեմյանը, որի կարծիքով այն գտնվել է Քաղիրթ (Բաթմանա ջուր, Բաթման-սու) գետի Շատախ վտակի ձորահովտում, որի վրայով Սիմսարի լեռնանցքով անցնում էր Աղձնիքը Տուրուբերանի հետ կապող ճանապարհներից մեկը: Տեղագրության համար հիմք է ծառայել Սպականք (Ասպականք)

«Խութայ»-ն կարծում ենք հետագա ընդմիջարկություն է (Պատմութիւն Տարօնոյ. Երևան, 1941, էջ 158):

26 Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ. Կոստանդնուպոլիս, 1852, էջ 132, 135:

27 Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 78. «ընակիչք լերինն Խոյթայ, որ Սասունքն անուանին»: Տարընթերցումներն են «Խօթայ, Խութայ, Խոթայ»: Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 107. «Խութացիք»: Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները. Վիեննա, 1907, էջ 188, 189. "خوى" և „al-Xuθiya"*.

28 Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները, էջ 177—178:

29 Նույն տեղում, էջ 178: Տե՛ս նաև J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen: Wien, 1930. S. 49*, 55*, 84, 86, 127, 202, 220, 223—230, 286, 297, 336.

30 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 311—312.

գյուղը, որը գտնվում է Տալվորիկի ձորում[31]։ Հարկ ենք համարում կրկին ընդգծել, որ Ասպակունիքը ևս գտնվում էր Հայկական Տավրոսի հարավային փեղերին, ուստի աշխարհագրական տեսակետից նրա պատկանելիությունը Տավրուբերանին պայմանավորված էր քաղաքական պատմության իրադարձություններով։ Հ. Հյուրշմանը Ասպակունիքը նույնպես համարում է նախնաբար տոհմի անուն, որն ածանցվել է Ասպակ-ից կամ Ասպ-ից։ Ըստ հեղինակի գավառանվան առաջին մասը՝ Ասպը ձի է նշանակում, իսկ Ասպական՝ որսորդ[32]։ Ինչ վերաբերում է այն խնդրին, թե Ասպակունիքը եղե՞լ է արդյոք նախարարական իշխանություն, պատասխանը միանշանակ մեկն է՝ եղել է։ Սակայն շատ տարօրինակ է, որ հիշյալ նախարարությունը, գտնվելով Մամիկոնյանների, Վահևունիների Սյունիների հարևանությամբ, հայոց պատմության մեջ այլևս ոչ մի անգամ չի հիշատակվում։ Որպես նախարարություն այն պետք է սկզբնապես մաս կազմեր Աղձնյաց բդեշխության։ Այդ իսկ պատճառով այն հիշյալ շրջանում չէր կարող և չի մտել հայոց թագավորների «Գահնամակի» մեջ։ Այն բանից հետո, երբ Աղձնիքի մեծ մասը ռազմակալվեց պարսիկների կողմից և միացվեց Սասանյան տիրույթներին, Ասպակունիքը մնաց Հայոց թագավորության մեջ և մաս կազմեց Տավրուբերան աշխարհի։ Այդ պահից սկսած նախկին բդեշխահպատակ նախարարությունը անմիջական ենթակայության տակ ընկավ հայոց արքունիքից, ուստի տրամաբանական էր տեսնել ուշ շրջանի «Գահնամակներից» մեկում։ Համեմատելով Սահակյան (Խոսրով Վերջինի—Հ. Բ.) «Գահնամակի» և «Զորանամակի» տվյալները[33], մենք գայիս ենք այն համոզման, որ նշված իշխանությունը, այնուամենայնիվ, արտացոլված է արքունի գահերի մեջ։ «Գահնամակի» «Վարասպակեանն» իշխանական ընտանիքը, մեր խորին համոզմամբ, պետք է նույնանա Ասպակունիքի[34] հետ։ Ըստ երևույթին սկզբնապես այն հնչել է Վարազասպակեանն և աստիճանաբար հնչյունափոխվելով դարձել Վարասպակեանն։ Անուս հավանաբար նշանակել է վարազի որսորդների իշխանություն։ Գավառանունը չի պահպանել իշխանության անվան սկզբնական մասը, որի հետևանքով այն դարձել է Ասպակեան կամ Ասպակունիք։ Իշխանության անվանումը Վարազարտիկեան աղավաղված գրությամբ պահպանվել է նաև «Զորանամակում»[35]։ Այն պարզապես եղել է Վարազպակեան։

Տավրուբերանի կենտրոնական և կուսակալանիստ գավառը Տարոնն էր, որը նույնիսկ իր անունն է տվել աշխարհին։ «Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրության մեջ Մեծ Հայքի նկարագրության սկզբում նշվում է. «Չորրորդ [աշխարհ]՝ Տա[ւ]ռուբերան, որ է Տարօն»[36]։ Թերևս այդ բանի օգտին է խոսում նաև Տակիտոսի հիշատակած regio Tauraunitum-ը[37]։ Ն. Ադոնցը իրավացիորեն գտնում է, որ Tauraun-itis-ը ծագումնաբանական կապ ունի Taurus լեռան (սեմ. t-v-r) անվան հետ, որից սերում է նաև Տարուբերան—Տաւրոյ-բերանը կամ առավել հին Տուրուբերանը[38]։ Չի կարելի չհամաձայնվել Ն. Ադոնցի այն

---

31 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 38։

32 Հ. Հյուրշման. Հին Հայոց տեղի անունները, էջ 307։

33 «Գահնամակ» և «Զորանամակ», տե՛ս Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 249—252.

34 Նույն տեղում, էջ 250։ Ասպակունյաց ձորը կամ Աղբագընունեաց գավառը կոչվել է նաև Գոգովիտ կամ Կոգովիտ (Ղ. Ալիշան. Հայապատում. Վենետիկ, 1901, էջ 297, 299)։

35 Նույն տեղում, էջ 252։

36 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, էջ 29։ Ն. Ադոնցը հակված է կարծելու, որ «о широкой известности его свидетельствует и то, что даже в Геогр. Таруберан определяется им». (Армения в эпоху Юстиниана, с. 309):

37 Tacitus: Ann., XIV. 24. «in regionem Tauraunitum».

38 Դրան կանդրադառնանք աշխարհի ձևավորման հարցի առնչությամբ։

մտքի հետ ևս, որ Taurauitis-ը Taraunitis սրբագրելը պատճառաբանված չէ, չնայած ունենք Մաուշել>Մաուշել անցումը[39]։

Տարոնը պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է բազմիցս։ Եթե հավատանք պատմահորը, ապա նա Օլիմպիոդորոսի երկից վերցրել է ներքոհիշյալ զրույցը. «Պատմեցից ձեզ, ասէ և զրոյցս անդիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, զորս և բազումք ի գեղջկաց զրուցեն մինչև յայժմ։ Մատեան լեալ զՔսիսուիթրեայ և զորդւոց Նորա, որ այժմ ոչ ուրեք երևի, յորում, ասեն, կարո լեալ բանից ալսպիսի։ Յետ նաւելոյն Քսիսուիթրեայ ի Հայս և դիպելոյ ցամաքի, դնայ, ասէ, մի յորդւոց Նորա կոչեցեալն Սեմ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն և դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լերամբ, զետոյ ընդ մէջ Նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի, դադարէ առ գետովն երկլուսնեայ աւուրս, և անուանէ յանուն իւր զլեառն Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ, ուստի եկն։ Իսկ ի կրտսերագունից որդւոցն Նորա Տարբան անուն երեսուն ուստերօք և հնգետասան դստերօք և նոցին արամբք մեկնեալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեզեր, յորոյ անուն և զգաւառն անուանէ Տարան, և զանուն տեղւոյն ուր բնակեցան՝ կոչէ Ցրօնս. զի անդ զառաջինն սկիզբն եղև բաժանելոյ որդւոց Նորա ի նմանէ»[40]։

Տարոնը պատմիչների գործերում այնքան հաճախ է ուշադրության արժանանում, որ դրանց բոլորին անդրադառնալն անիմաստ է։

Հայ և արաբ աղբյուրներում տեղ է գտել ոչ միայն Տարոնը, այլև նրա մեջ գտնվող բազմաթիվ բնակավայրեր, ամրոցներ, եկեղեցիներ, բնաշխարհագրական կետեր, որոնք բարեխղճությամբ հավաքել են Ղ. Ինճիճյանը և Ղ. Ալիշանը[41]։

Տարոնի միջով հոսում է Արածանի գետը, որը նշված հատվածում ավելի շատ հայտնի է Եփրատ անունով։ Գավառի գրեթե ամբողջ երկարությամբ ձգվում է Արածանիի վտակ Մեղ գետը, որն ուշ ժամանակներում հայտնի էր Մեղրագետ անունով։ Անտարակույս է, որ հիշյալ վտակը իրոք սկզբնապես կոչվել է Մեղ (=սև), որի թարգմանությունն է մահմեդական բնակչության կողմից գետին տրված Կարասու (=Սև ջուր) անունը։ Ինչ վերաբերում է Մեղրագետին, ապա այն ժողովրդական ուշ շրջանի իմաստավորման արդյունք է[42]։

Ամփոփելով Տարոնի վերաբերյալ մեր ասածը, կարելի է մեծ ճշտությամբ անցկացնել վերջինիս սահմանները։ Հարավում գավառի համար սահմանաբաժան էին կազմում Հայկական Տավրոսի լեռները, արևելքում՝ Վանա լիճը շրջափակող Բզնունյաց լեռները՝ Նեբրովթ լեռնագագաթով, հյուսիսում՝ Նագիկ լճից մինչև Քարքե լեռը ձգվող լեռնաբազուկները, իսկ արևմուտքում՝ Քարքե լեռնաագաթից և Տավրոս լեռներից սկիզբ առնող երկու լեռնաբազուկներ[43]։

Արշամունիք գավառի վերաբերյալ մեր տեղեկություններն անհամեմատ աղքատ են։ Հայտնի է, որ նրա մեջ էին գտնվում Ծախնոտ և Երեզ բնակավայ-

---

39 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 308—309. Սրբագրությունը կատարել են de Lagarde (Ges. Abh. 46. ծան. 6) և Հ. Հյուբշմանը (Հին Հայոց տեղվո անունները, էջ 189)։

40 Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 25—26։ Զրույցի Քսիսուրեայն «Աստվածաշնչի» Նոյն է։

41 Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 92—113։ Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1855, էջ 44—46։

42 Մեղ գետը չի կարելի շփոթել Մեղտեայ գետի հետ (Հովհան Մամիկոնյան, էջ 185)։ Այն չէր կարող սկզբնապես կոչվել «Մեղր», ինչպես ենթադրում է Հ. Հյուբշմանը (Հին հայոց տեղվո անունները, էջ 186)։

43 Ս. Երեմյանը Մեղ գետի վերին հոսանքի շրջանը համարում է խուլթի մաս և անգամ դրա մեջ է մտցնում Բաղաղեշը («Հայաստանը ըստ Աշխարհացույցի»-ի, քարտեզ, Գ—4, 5)։ Իրականում Բաղաղեշի շրջանը մտել է Բզնունիքի մեջ, իսկ Մեղ գետի վերին հոսանքի շրջանը՝ Տարոնի։

բերը[44] և այն սահմանակից էր Տարոն և Հաշտեանք գավառներին[45]։ Արշամունիքի մեջ պետք է գտնվի նաև Օղին գյուղը, որ կոչվում էր նաև Շտեայ[46]։ Սկսելով բերված տվյալներից և «Աշխարհացույցի» այն հաղորդումից, որ Արշամունիքը տարածվել է մինչև Սերմանց լեռը (Աշմունիք՝ առ Սրմանց լեռամբ), գավառի սահմանները կարելի է անցկացնել ներքոհիշյալ գծով. հարավում՝ մեր կողմից արդեն քննված Տարոնի սահմանով, արևմուտքում՝ Գինեկ գետի և Մյուս Գայլի ջրբաժան լեռներով, հյուսիսում՝ Սրմանց լեռով և նրանից արևմուտք ու հարավ-արևելք ձգվող լեռնաճյուղերով, արևմուտքում Հարբ և Վարդոն իրարից բաժանող լեռնաբազուկներով։

Արշամունիքը իր աշխարհագրական դիրքով հարվիվ թե մասն կազմեր Տարոնի, ուստի Հ. Հյուբշմանի այն միտքը, թե իբր Փավստոս Բուզանդը այն համարում է Տարոնի մաս[47], պարզապես ճիշտ չէ։ Պատմիչը այն համարում է Տարոն գավառի մաս. «Արշամունեաց տեղեացն ի նահանգէն Տարօն գաւառէն»[48]։ Այսինքն խոսքը չի վերաբերում նեղ իմաստով Տարոնին, այլ աշխարհ Տարոնին։ Գավառի ծաղումը մենք կապում ենք Տիգրան Մեծի գործունեության հետ։ Գրավելով Ծոփաց թագավորությունը և այն միացնելով Մեծ Հայքի թագավորությանը, նա, ըստ երևույթին, Ծոփքի արքայատոհմի ներկայացուցիչներին տեղափոխել է Մեծ Հայքի կողմերը և կալվածքներ տվել, որոնք կամ նրա օրոք կամ ավելի ուշ վերածվել են ինքնուրույն գավառի, որը Արշամունյաց արքայատոհմի անունով կոչվել է Արշամունիք։ Ավելի ուշ Արշամունիքը հիշատակվում է որպես Մանդակունյաց իշխանական ընտանիքի տիրույթ։

Տուրուբերանի հաջորդ գավառը հայտնի է Մարդաղի անունով։ Այն հիշատակվում է Եղիշեի, Ասողիկի երկերում[49] և եկեղեցական ժողովների արձանագրություններում[50]։ Ուշ շրջանում հայտնի էր Սևուկ բերդակ անունով[51]։ «Աշխարհացույցը» Մարդալին տեղադրում է Մեղեդուղխ լեռների հարևանությամբ մինչև Այծպտկունք, որը բաժանում է այն Կարինից։ Գավառի արևելյան կողմով հոսում էր Մուրց գետը, որը Բասենում խառնվում էր Երասխին և գարձնում այն հորդառատ գետ։ Անհասկանալի պատճառներով որոշ ուսումնասիրողներ փորձում են Մուրցը նույնացնել Բասենի գետին[52], որը բացարձակապես հակասում է «Աշխարհացույցի» տվյալներին։ Հնդիրն այն է, որ ըստ «Աշխարհացույցի» Մարդաղիի «յելից բխէ Մուրց գետ, գնալով ընդ հիւսիսի՝ իջանէ ի Բասեն գաւառ, եւ խառնի յԵրասխ՝ եւ գետացուցանէ զնա»[53], իսկ «զԲազսեն, ընդ որ անցանէ Երասխ՝ գետացեալ ի Մուրցամօր գետոյ, որ բաժանէ զԳարեղեանս ի հարաւ եւ զԱբեղեանս եւ զՀաւունիս ի հիւսիսի»[54]։ Որ իրոք Երասխի սկիզբը վաղ միջնադարում համարվում էր Բասենի գետը, երևում է «Աշխարհացույցի» մեկ այլ տեղեկությունից, ըստ որի Բարձր Հայքը «ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ. զի բղխէ չորս գետս զօրեղս զԵփրատ՝ յարեւմուտս, եւ զԵրասխ՝ յարեւելս, զԳայլ ի հարաւ, զԱկամսիս որ է Վոհ ի հիւ-

44 Ասողիկ, էջ 81, 276։ Ղազար Փարպեցի, էջ 149, 150։

45 Փավստոսի Բուզանդացւոյ. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1832, էջ 123։ Ղազար Փարպեցի, էջ 149։

46 Ղազար Փարպեցի, էջ 150։

47 Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, էջ 192։

48 Փավստոս Բուզանդ, էջ 123։

49 Եղիշե, էջ 28։ Ասողիկ, էջ 192։

50 Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 114։

51 Ասողիկ, էջ 192. «զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի»։

52 Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, էջ 185. «այժմ Բասին, որուն անուամբը Մուրց գետը այսօր թրք. Բասին-սու (Լինչի քով՝ Egri-Çai) կը կոչուի»։ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 71. «Մուրցամար կամ Մուրց գետ—Գ-Ա, այժմ՝ Հասան-Ղալա-սու»։

53 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, էջ 31։

54 Նույն տեղում. էջ 33—34։

սիս»[55]։ Այս իրողությունը ժամանակին նկատել է Ղ. Ալիշանը և ցույց տվել, որ հնում Բյուրակնի գետը (Բինգյոլ-սու) Երասխի սկիզբը չէր համարվում, այլ նրա Մուրց վտակն էր[56]։ Պլինիոս Ավագի տվյալները Երասխի վերաբերյալ միանգամայն համահնչուն են «Աշխարհացույցի» տեղեկություններին։ Այսպես, ըստ լատին բնագետի «Արաքսը ծնվում է միևնույն լեռներում և Եփրատը՝ 600 քայլ միջանկյալ հեռավորությամբ, և աճելով Մու[ր]սիս գետակով, ինքը թափվում է, ըստ մի քանի աղբյուրների (կարծիքի), Կյուրոսի մեջ, որը նրան տանում է Կասպից ծով»[57]։ Պլինիոսի մոտ ևս Արաքսը Բասենի գետն է, իսկ Մու[ր]սիսը՝ Բյուրակնը, ուստի պարզապես զարմանալի է, որ ըստ Ս. Տ. Երեմյանի «Արաքսի ակունքներից ոչ հեռու գտնվող Մուրց գետը համարվում էր Արաքսի սկիզբը, իսկ Մուրց գետի ակունքների ջրբաժան Ծիրանյաց լեռների (այժմ՝ Փալանթյոքան-դաղ) արևմտյան փեշերին գտնվում էին Եփրատի ակունքները»[58]։

Մարգաղի գավառի սահմանները մեծ հավանականությամբ որոշված են Ս. Երեմյանի կողմից։ Հարավում դրանք անցել են Սերմանց լեռնագագաթից արևմուտք ձգվող լեռնաբազուկով, արևմուտքում՝ Մանանադի և Մուրց գետերի ջրբաժան Մեղեդուղխ լեռներով, հյուսիսում՝ Այծպտկունք լեռից գեպի Մուրց գետը երկարող լեռնաճյուղով, իսկ արևելքում՝ Մուրց գետով և Սերմանց լեռնագագաթից գեպի հյուսիս-արևելք ձգվող լեռնաբազուկով[59]։

Տավրուբերանի Դասնավորք գավառը հաղվագյուտ է հիշատակվում հայոց պատմության մեջ։ Դրա մասին գիտեն Հովհաննես Դրասխանակերտցին[60] և Ասողիկը[61]։ Տեղեկություններն այնքան սուղ են, որ դժվար է հստակ սահմաններ անցկացնել, ուստի այն պետք է տեղադրել Մուրց (Բյուրակն) գետից արևվելք, մինչև նրա արևելյան ջրբաժանը։

Դասնավորքից արևելք, ինչպես հավաստում է «Աշխարհացույցը», գտնվում էր Տվարածատափ գավառը։ Համաձայն Ղազար Փարպեցու, այն սահմանակցում էր Բագրևանդին[62], իսկ ըստ Լաստիվերտցու տվյալների՝ Տվարածատափից ոչ հեռու գտնվում էր Ավնիկ ամրոցը[63]։ Հիմնվելով նշված տեղեկությունների վրա, Ղ. Ալիշանը Տվարածատափը տեղադրում է Գյոքսուի և Կարայազի շրջանում[64], Ն. Ադոնցը՝ Եփրատի ավազանում, Կարայազի տեղում[65], իսկ Ս. Երեմյանը՝ Ղարայազի (իմա՛ Կարայազի) դաշտում՝ Գյոք-սու գետակով[66]։ Նման տեղորոշումը առաջին հայացքից կարծես թե լիովին բավարարում է մեզ հայտնի բոլոր փաստերին, սակայն այդ դեպքում գավառը անջրպետվում է Բագրևանդից Դալաո գավառով, հանգամանք, որ խիստ էական է։ Ուստի մենք

---

55 Նույն տեղում, էջ 29—30։

56 Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ, էջ 3, 4, 7, 25։

57 P l i n., NH, VI, 10.

58 Հայ ժողովրդի պատմություն (ուշ հատորով), հ. Ա, Երևան, 1971, էջ 838։

59 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», բարտեզ, Գ—4։ Н. А д о н ц. Указ. соч., с. 314.

60 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 105. «Տրդատ ի Դասնաւորից»։

61 Ա ս ո ղ ի կ, էջ 105. «Տէր Տրդատ ի Դասնաւանից ամս Գ»։ Կասկած չկա, որ այս Տեր Տրդատը նույնական է Դրասխանակերտցու Տրդատին, ուստի «Դասնավանից»-ը պետք է սրբագրել «Դասնաւորից»։ Կամ էլ Դասնավանը եղել է գավառի կենտրոնը։

62 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 57. «Եւ եկեալ հասանէին ի գիւղ մի որոյ անունն էր Արամանայ, ի նահանգին Բագրաւանդայ, մերձակայ սահմանակից Բաւենոյ և Տուարծատափուն»։

63 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի. Երևան, 1963, էջ 89. «[Տուզրիլ սուլթանը] խաղայ իջանէ ի Տուարածոյ Տափ, և անտի իջանէ ընդարձակ դաշտն Բասենոյ առ անտառ ամրոցաւն, որ կոչի Անիկ»։

64 Ղ. Ա լ ի շ ա ն. Տեղագիր Հայոց Մեծաց, § 35։

65 Н. А д о н ц. Указ. соч., с. 314.

66 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 86։

գտնում ենք, որ Տվարածատափը պետք է տեղադրվի ոչ թե Գյոք-սուի հովտում, այլ Էլմալի-դերեի, այսինքն Կարայազի հյուսիսային հատվածում, որն անմիջապես սահմանակցում է Բագրևանդին։ Ըստ այդմ էլ Կարայազի հարավ-արևելյան հատվածը Գյոք-սուի հովտով և շրջակա տարածքով պետք է նույնանա Դալատ գավառին։ Անշուշտ այն բացարձակ իմաստով Տվարածատափից արևելք չէ, ինչպես հավաստում է «Աշխարհացույցը», սակայն այն ժամանակների ընկալմամբ, երբ աշխարհագրական տեսակետից Հայաստանի արևելքը պատկերվում էր դեպի հյուսիս նշանակալից շեղումով, Գյոք-սուի հովիտը կարող էր և Էլմալի-դերեի նկատմամբ արևելք դիտվել։

Տավրոսբերանի նշանավոր գավառներից էր Հարքը։ Հ. Հյուբշմանը չի ընդունում Պատմահոր այն մեկնությունը, որ Հարք նշանակում է «թէ հարք (հայրեր—Հ. Բ.) ևն ատէն բնակեալք», քանի որ Հարքի սեռականը ոչ թե «Հարց» է, այլ «Հարքայ», իսկ հայցականը՝ «զՀարք» և ոչ թե «զՀարս»[67]։ Գավառի մասին հիշատակություն ունեն հայկական աղբյուրներից զատ նաև Կոստանդին Ծիրանածինը (Harq) և արաբական աղբյուրները (al-Hark)[68]։ Հարքի արևելյան սահմանագլխին գտնվում էր Մանավազակերտ, Մանազկերտ կամ Մանծկերտ (ներկայումս՝ Մելազգիրդ) քաղաքը, որը երբեմն վերագրվում էր Ապահունիք գավառին[69]։ Գավառի նշանավոր բնակավայրերից էին Հայկաշենը, որն ըստ ավանդության կառուցել էր Հայկ նահապետը, Դոնեվանքը, Եղեգականը, Հերեանը, Մանկանդոմը, Տոդատափը և այլն[70]։ Դստեղով Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ից, Հարքը թերևս կոչվել է նաև «Կոդմանը Եփրատական գետոյն», որի Ադրիանոս եպիսկոպոսին Փավստոս Բուզանդը կոչում է Մանազկերտի եպիսկոպոս[71]։

Սկզբնապես Հարքը, հավանաբար, ընդգրկել է Տարոնից հյուսիս-արևելք ընկած ընդարձակ լեռնադաշտը, որը տարածվում էր Արածանի կամ Եփրատ գետի երկու ափերին։ Դրա օգտին են վկայում գետի ձախափնյակում գտնվող Հայկաշեն և Եղեգական, Տոդատափ և Մանկանդոմ բնակավայրերը։ Այլ խոսքով այն համապատասխանել է ուշ ժամանակների Բուլանուխ կամ Բուլանդ վիճակին։ Սակայն «Աշխարհացույցը» մատուցում է միանգամայն այլ կացություն։ Պարզվում է, որ Հարքը տարածվել է մինչև Արածանի գետը, այսինքն վերջինիս ձախափնյակը «Աշխարհացուցյան Հարքի մեջ չի մտել. «Ի հարաւոյ նոցա (Տվարածատափի և Դալատի—Հ. Բ.) Հարք եւ Վաժնունիք (իմա՛ Վարաժնունիք—Հ. Բ.) մինչև զԱրածանի, որ իջանէ զԱպահունեաց»[72]։ Այս իրողությունը «Աշխարհացույցը» մեկ անգամ ևս հավաստում է՝ կապված Ապահունիքի տեղադրության հետ. «Ադիովիտ գաւառ եւ ամուրեր նորա Ապահունիք, ընդ որոյ մէջն անցանէ Արածանի լերդն Բզնունեաց»[73]։ Դժվար չէ տեսնել, որ Ապահունիքի միջով անցնող Արածանին այնուհետև հոսել է Բզնունիքի եզրով կամ սահմանով, այսինքն Արածանին հանդիսացել է Հարքի և Բզնունիքի սահմանաբաժան գիծ։ Եզրակացությունը միանշանակ է. «Աշխարհացույցը» արտացո-

---

67 Հ. Հյուբշման. Հին հայոց տեղվո անունները, էջ 369։

68 Կոստանդին Ծիրանածին, տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հրաչ Բարթիկյանի, էջ 11—12։ Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, էջ 193։

69 Փավստոս Բուզանդ, էջ 9—10, 226, 263։ Ասողիկ, էջ 73, 103, 183, 192, 266, 270, 277։ Մատթեոս Ուռհայեցի, էջ 141, 145, 232, 239, 542։ Եղիշե, էջ 27։ Ղազար Փարպեցի, էջ 44։ Հովհան Մամիկոնյան, էջ 117. «Մանծկերտ»։

70 Ղ. Ինճիճեան. Աստրագրութիւն հին Հայաստանեայց, էջ 120։ С. Т. Еремян. Тарон в древности и в средние века, оформил Г. Н. Горнакалян, масштаб 1 : 200000.

71 Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ս. Կանայեանց. Տփղիս, 1909, § 845։

72 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, էջ 31։

73 Նույն տեղում։ Այս իրողությունը նկատել է Ն. Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, с. 313)։

լում է որոշակի վարչաքաղաքական կացություն, երբ Հարքի տարածքի հարավային կեսը Բզնունյաց գավառի մաս է կազմել։ «Աշխարհացույցը» Հարք է անվանում Արածանիից հյուսիս ընկած տարածքը, սակայն ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Ն. Ադոնցը, Հարքին սահմանակից Ապահունիք, Խորխոռունիք, Բզնունիք գավառները սկզբնապես մտել են Հարքի մեջ և հետագայում ձևավորվել որպես առանձին գավառներ նախարարական առանձին տիրույթների հիման վրա[74]։ Ըստ որում այդ մասին հավաստում է նաև Պատմահոր մեկ այլ հաղորդումը, ըստ որի «և զնախարարութիւնն Ապահունեաց և զՄանաւազեանն և զԲզնունականն ի նոյն զաւակացն Հայկայ. ի բնակչացն գտեալ զպերճագոյնսն՝ տեարս կարգէ, յանուն շինից և գաւառաց կոչելով»[75]։ Ճիշտ է, այս տեղեկության մեջ բացակայում է Խորխոռունիների անունը, սակայն այդ բացատրվում է այն իրողությամբ, որ պետական պաշտոն զբաղեցնող Խորխոռունիները մինչ այդ հիշատակվել են արքունի գործակալությունների հետ կապված[76]։

Բերված տեղեկություններից հետևում է, որ Խորխոռունիները տիրույթներ են ունեցել Արածանիից հյուսիս ընկած շրջանում, որը լիովին համահնչուն է Պատմահոր այն տեղեկությանը, որ Խոռի տոհմը բազմանում է հյուսիսային կողմերում։ Նույնքան հասկանալի է դառնում, որ Մանավազյանները տիրույթներ են ունեցել Արածանիի ձախափնյակում, որոնց մեջ էր նրանց աթոռանիստ Մանավազակերտը։ Ոչ պակաս բացատրելի է այն հանդամանքը, որ Մանավազակերտ-Մանազկերտը գտնվել է Հարքի և Ապահունիքի սահմանագլխին։ Խնդիրն այն է, որ մինչև Ապահունիների և Բզնունիների հանդես գալը Հարք գավառը (լայն առումով) կառավարվել է Մանավազյանների կողմից, որոնց ժամանակ Մանավազակերտը գրեթե կենտրոնական դիրք էր գրավում այնտեղ։ Սակայն Ապահունիքի և Բզնունիքի անջատումը պատճառ դարձավ, որ աթոռանիստը հայտնվի իշխանության ծայրամասում։

Մանավազյանների ռազմական հզորությունը կոտրելու նպատակով, ամենայն հավանականությամբ, արքունիքը նրանց տիրույթները սահմանափակել է Հարքի (նեղ առումով) հարավային հատվածով, իսկ նրանց կրտսեր ճյուղերից հիմք դրել Բզնունյաց և Ապահունյաց իշխանական ընտանիքներին։

Հիշյալ երկրամասի վարչաքաղաքական դարգացումը ներկայանում է հետևյալ կերպ։ Միասնական Հարքի հյուսիս-արևմտյան մասում առանձնանում են Խորխոռունիները, իսկ մնացած հատվածում իշխում են Մանավազյանները։ Այդ իսկ պատճառով հայկական ավանդական պատմությունը Խոռին և Մանավազին համարում է եղբայրներ։ Ավելի ուշ Մանավազյանների կրտսեր ճյուղը, անջատվելով, սկիզբ է գնում Բզնունիների հզոր նախարարությանը և այդ պատճառով էլ նույն ավանդական պատմությունը Բաղին համարում է Մանավազի որդի։ Ինչ վերաբերում է Ապահունիներին, ապա աղբյուրների տեղեկությունները բավարար նյութ չեն տալիս որոշելու, թե նրանք որպես իշխանական ընտանիք ձևավորվեցին Խորխոռունիների ու Մանավազյանների հետ մեկտեղ, թե՞ Բզնունիների հետ միաժամանակ։ Համենայն դեպս ավելի հավանական է երկրորդ վարկածը։

Հարքի հարևանությամբ, դեպի արևմուտք, գտնվում էր Վարաժնունիքը, որի վերաբերյալ մեզ գրեթե տեղեկություններ չեն հասել։ Ղ. Ալիշանը գավառս տեղադրում է Խամուրի, Լիդի և Բուլանուխի շրջանում[77], որն անշուշտ սարդասպես ճիշտ չէ։ Ընդունելի է Ս. Երեմյանի տեղադրությունը, ըստ որի

74 Նույն տեղում։

75 Մովսես Խորենացի, էջ 115—116։

76 Նույն տեղում, էջ 110. «Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս և գլուխ նահապետութեան նոցա զՄարխաղ ոմն այր բարի Ի սրտեայ։ Բայց անուն ազգին զնախնականն պահէ»։

77 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 29, § 35։

Վարաժնունիքը ընդգրկել է Խնունիս (Խնուս) գետի հովիտը[78]։ Հ. Հյուբշմանը և Մ. Ղազարյանը Բալաձորիի հիշատակած Bajunais-ը փորձել են նույնացնել Վարաժնունիքի հետ, չնայած իրենք էլ նկատել են, որ այդ երկրամասը Արճեշի կողմերում պետք է գտնվեր[79]։ Ն. Ադոնցը, ելնելով Բաջունայս անունից, հակված է այն նույնացնելու ավելի շուտ Բզնունիքի հետ, սակայն, քաջ գիտակցելով, որ երկրամասերի ցանկում Բաջունայսի հետ Խլաթի հիշատակությունը այդ համադրումը դարձնում է անհնարին, հեղինակը ի վերջո Բաջունայսը նույնացնում է Ապահունիքի հետ[80]։ Այդ տեսակետը կիսում է նաև Հ. Մարքվարտը[81]։

Տավրուբերանի առավել նշանավոր գավառների թվին է պատկանում Բզնունիքը, որը, ինչպես վերը պարզեցինք, տարածվում էր մինչև Արածանի գետը։ Արևելքում այն ծավալվում էր մինչև Նեխ-Մասիք լեռը, հարավ-արևմուտքում՝ Բաղեշ ամրոցը, արևմուտքում՝ Սարակն լեռը և Արածանի գետը, իսկ արևելքից և հյուսիս-արևելքից եկերվում էր Վանա լճով։ Գավառը հիշատակում են Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Պատմահայրը, Թովմա Արծրունին և ուրիշներ[82]։ Գավառի որպես սահմանային կետ հիշված Նեխ-Մասիքը Սիփան լեռն է, որի անունը աղերս ունի Ծիպան կղզու անվանման հետ, իսկ Մասիքին տրված «Նեխ» հավելումը այն Ազատ Մասիսից տարբերելու համար է[83]։ Որ Նեխ-Մասիքը իրոք Սիփան լեռն է, պարզ երևում է «Յայսմաւուրքի» մի հետաքրքիր տեղեկությունից. «Անտի եկեալ հասին ի գաւառն Բզնունեաց Մասեաց՝ ի Վանս Արծկոյ որ կոչի Երաշխաւոր»[84]։

Գավառի նշանավոր վայրերից էին Արծկեն[85], Խլաթը (արաբական տիրապետության ժամանակներից)[86] և անշուշտ Բաղաղեշը կամ Բաղեշը։ Վերջինս ներկայիս Բիթլիս քաղաքն է։ Ներկա անվանումը, չնայած առաջին հայացքից թուրքական և արաբական տիրապետության կնիքն է կրում իր վրա, իրականում ավելի հին է, քան Բաղաղեշ ձևը։ Պարզապես գրական լեզվում Բայթալես հին անվանումը վերածվել է Բաղաղեշի, իսկ քաղաքի բնակիչների կենդանի լեզվում այդ հնչյունափոխությունը չի կատարվել և Բայթալեսը վերածվել է ուղղակի Բաթլիսի կամ Բադլիսի, իսկ ավելի ուշ՝ Բիթլիսի։ Սեբեոսի երկը պահպանել է Բաղաղեշի անունը Բաղեշ ձևով[87], որը բնավ չի պատճառաբանվում Գևորգ Կիպրացու տեղեկությունների հենքի վրա[88]։ Եթե վերջինս Բաղեշի լեռնանցքը գիտեր Χλειστῶρα βαγαβισων անունով, ապա ամենայն հավանականությամբ Սեբեոսը Բաղեշի ամրոցը պետք է կոչեր Բաղաղեշ[89]։

---

78 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 82։ Ավելի վաղ նման տեղադրություն առաջադրել է Ն. Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, с. 314):

79 M. Ghazarian. Armenien unter der arabischen.— Herrschaft. Marburg, 1903, էջ 21, 74։ Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները, էջ 193։

80 Н. Адонц, Указ. соч., с. 314.

81 J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen. S. 106—107.

82 Փավստոս Բուզանդ, էջ 19, 114։ Եղիշե, էջ 28։ Ղազար Փարպեցի, էջ 23, 44, 106։ Մովսես Խորենացի, էջ 38, 116, 193, 258, 349։ Թովմա Արծրունի, էջ 108, 186. «գաւառն Բզնունական»։

83 Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները, էջ 187։

84 Նույն տեղում, էջ 187։

85 Ղազար Փարպեցին այն հիշում է «Արծկէ», բյուզանդական աղբյուրները՝ Ἀρτζάκε և Ἀλτζάκε ձևով (Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները, էջ 194)։

86 Նույն տեղում, էջ 194. «Այս գաւառին մէջն էր Խլաթ Պատմ. Ս. Հռիփսիմ. 300. Ինճիճ. 22. 121, արաբ. Xilāṭ Balasur, 176, 193, ևն, յն. Χλάτ. Χλάτ Կոստ. Պորփիւր. de adm. imp. 191—196. Χλάτ Mich. Attal. Hist. 131, 132, ևն»։

87 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Վ. Գ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 165. «բերդն Բաղիշոյ», որ այնուամենայնիվ, Սեբեոսի երկում ամրոցի անունը եղել է Բաղաղեշ, հաստատում է ձեռագրերից մեկի «Բաղաղիշոյ» տարընթերցումը (Նույն տեղում)։

88 Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները, էջ 187։

89 Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 48.

«Աշխարհացույցի» տեղեկությունը Բաղեշի տարածքային պատկանելիության հարցում այնքան էլ հստակ չէ[90]։ Այն կարելի է ընկալել Բզնունիքի ամրոց, սակայն նույն հաջողությամբ կարելի է պնդել, որ այն պարզապես գտնվել է Բզնունիքի սահմանագլխին, սակայն Աղձնիքի տարածքում։ Այդ անորոշ կացությունը որոշակիանում է Վարդանի «Աշխարհացույցի» տվյալների շնորհիվ։ Նա գրում է. «Բզնունիք Արծկէ է եւ Խլաթ եւ Բաղէշ մինչ ի Խիզան, ուստի է սուրբ Խաչն և Գամաղիել։ Այս միջոցս ամենայն Բզնունիք ասի»[91]։ Հ. Հյուբշմանի կարծիքով Վարդանի կողմից Բաղեշը Բզնունիքին ընծայելը հին ժամանակների համար նշանակություն չունի[92], սակայն մեր կարծիքով այն արտահայտում է իրերի իսկական վիճակը։ Ճիշտ է, Բաղեշի բնակիչները իրենց քաղաքը համարում էին Սալնոձորի մեջ[93], սակայն եղած փաստերը աներկբայելի են դարձնում վաղ միջնադարում նրա պատկանելիությունը Բզնունիքին։ Չի բացառվում, որ Մավրիկիոս կայսեր վարչական վերափոխությունների ժամանակ այն կարճ ժամանակով միացվեց Արզանենե-Աղձնիքին, սակայն շատ չանցած վարչական նախկին կացությունը վերականգնվեց[94]։

Վանա լճի կղզիներից երեքը՝ Արծկեի, Ծիպանի և Տոքեան, ըստ «Աշխարհացույցի» գտնվում էին Բզնունյաց գավառում։ Ներկայումս դրանք լճի ջրերի բարձրանալու հետևանքով վաղուց ջրասույզ են եղել։ Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ, երբ սելջուկյան սուլթան Տուղրիլը XI դարի կեսերին հարձակվեց Հայաստանի վրա, Արծկե քաղաքը գտնվում էր կղզու և մայր ցամաքի վրա. «(Տուղրիլը) երթեալ՝ հանդիպի քաղաքի միոջ, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ և քաղաքացիքն յայս ապաստան եղեալ ի ծովն և յամրոցն, յանհոգս կային»[95]։ Շատ հնարավոր է, որ այդ շրջանում իրենց գոյությունը դեռևս պահպանել էին նաև Ծիպանի և Տոքեան կղզիները։

Բզնունյաց գավառի հարավ-արևելյան սահմանագլխին գտնվում էր Երիվարք գավառը, և բոլոր տվյալները կան ենթադրելու, որ վաղնջական ժամանակներում այն Բզնունյաց մաս է կազմել։ «Աշխարհացույցից» զատ այդ գավառը հիշատակվում է միայն Թովմա Արծրունու երկում. «(Գագիկ Արծրունին—Հ. Բ.) Եւ առեալ զկապուտ երկրին՝ դարձեալ գայ ի գաւառն անուանեալն Երիւարկ, առնու և անդ զբերդն Պաղայ, և զՓարհուաց, գայ և ի ձորն Առուանից, առնու և զայն ևս ամրոցն և տիրէ գաւառացն»[96]։ Ելնելով այս և «Աշխարհացույցի» այն տվյալից, ըստ որի գավառը գտնվել է Տավրոս լեռների և Բզնունյաց ծովի միջև[97], ուսումնասիրողները գավառը տեղադրել են Աղձնիքի Կոտոմից հյուսիս, Վանա լճի հարավ-արևմտյան ափին, Կարճկանի շրջանում[98]։ Երիվարք գավառի Եղիզի փոքրիկ լիճը գտնվել է Գյոլլի և Կենդրանց գյուղերի միջև ընկած դաշտում, որտեղ գարնանը մի քանի ամսով ձնհալքի ջրերից լիճ էր գոյանում, որը տեղ-տեղ 10 ոտնաչափ խորություն էր ունենում։ Հետո ջուրը ստորգետնյա ուղիներով լցվում էր լիճը, իսկ գյուղացիները, մշակելով այդ հողերը, արտակարգ բերք էին ստանում[99]։ Հիշյալ չորացող լճից ոչ հեռու գտ-

90 Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, էջ 187—188։

91 Աշխարհացույց Վարդանայ Վարդապետի. Բարիզ, 1960, էջ 20։

92 Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, էջ 188։

93 Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 123—124։

94 Georgii Cyprii Descriptio orbis Romani, էջ 48.

95 Արիստակես Լաստիվերտցի, էջ 94։

96 Թովմա Արծրունի, էջ 434։

97 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, էջ 31։

98 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 51։ Ղ. Ալիշանը զարմանալիորեն գավառը տեղադրում է Գյուղել-ղերևում (Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23, §.35)։

99 W. Belck. Beitrage zur alten Geographie. S. 2, 81. Х. Б. Лынч. Армения. Т. II. Тифлис. 1910.

նվում էր պատմական Պաղը, որ ներկայումս կոչվում է Պախ կամ Բախ (Bakh)[100]։ Փարհուաց բերդի տեղադրությունը առայժմ պարզված չէ։

Տավրուբերանի ծայր հյուսիս-արևելյան գավառը Աղիովիտն էր, որի տարածքի մեծ մասը Առբերանի և Հաշտեանք գավառների հետ մեկտեղ հանձնված էր Արշակունյաց արքայատոհմի սեպուհներին[101]։ Գավառում էր գտնվում արքունի քաղաք Զարիշատը։ Թովմա Մեծոփեցու օրոք Զարիշատը գյուղաքաղաք էր, որը հեղինակի հավաստմամբ գտնվում էր Քաջբերունյաց գավառում[102]։ Պատմիչները Աղիովտում հիշատակում են Արճեշ գյուղը կամ քաղաքը[103], որի ավերակները այսօր լճի հայելու բարձրացման հետևանքով ջրասույզ են եղել[104], Երիկավը, Խառաբաստայ գյուղը, Խառաբաստայ կամ Սուխարայ վանքը, Կերմանից գյուղը, Մեծոբայ կամ Մեծոփա ուխտը, Ասպիսնակ (Ասպսակ) կամ Վարախանից գյուղը, Ասպիսընկայ վանքը և այլն[105]։

Բերված տվյալները ոչ մի կասկած չեն թողնում, որ Աղիովիտը գտնվել է Աղի գետի հովտում, տարածվելով մինչև Նեխ-Մասիք լեռը և Աղի լեռնանցքը՝ արևմուտքում, Ծաղկանց լեռները՝ հյուսիսում, Առեստ գետի արևմտյան ջրբաժանը՝ արևելքում և Վանա լիճը՝ հարավում։ Սակայն Ղ. Ալիշանը զարմանալիորեն գավառը տեղադրել է Բաղնոցի և Սարըսուի շրջանում[106]։ Ս. Երեմյանը գավառը ճիշտ է տեղադրում, սակայն ձեռքի տակ չունենալով «Աշխարհացույցի» բոլոր ձեռագրերի տարընթերցումները, նա հիշյալ գավառը բաժանում է երկու մասի, որի արևմտյան հատվածը որպես Աղիովիտ գավառ հատկացնում է Տավրուբերանին, իսկ արևելյան հատվածը որպես Աղիովիտ գավառ՝ Վասպուրականին։ Նրա կարծիքով, ըստ երևույթին սկզբում գոյություն է ունեցել մեկ Աղիովիտ գավառ, որը հետագայում վաճառաշահ Զարիշատ քաղաքի բարձրանալու հետևանքով, որն ստացել էր «արքունի քաղաքի» իրավունք, բաժանվում է երկու մասի, որոնցից արևմտյանը դառնում է Զարիշատի քաղաքային տարածք[107]։ Վասպուրականը Աղիովիտ անունով գավառ չի ունեցել[108], հետևաբար անկախ ներքին բաժանվածությունից Աղիովիտը ամբողջությամբ պատկանում էր Տավրուբերանին։ Այդ իրողությունը պարզորոշ երևում է նաև այն փաստից, որ Հայաստանի 591 թ. երկրորդ բաժանման ժամանակ պարսկա-բյուզանդական սահմանագիծը անցնում էր ոչ թե իրականության մեջ գոյություն չունեցող երկու Աղիովիտների միջով, այլ Առեստի անմիջական հարևանությամբ[109], որով կարծես թե Վասպուրականի մի հատվածը ևս

---

100 V. Cuinet. La Turquie d'Asie, 2, Paris, 1892, c. 634—635: Карта Генерального штаба, масштаб 1 : 200000, 10-38-13:

101 Մովսես Խորենացի, էջ 137։

102 Նույն տեղում, էջ 284. «յարքունական քաղաքին Զարիշատի»։ Փավստոս Բուզանդ, էջ 172։

103 Ասողիկ, էջ 41, 102։ Թովմա Արծրունի, էջ 478. «զԱրճեշ քաղաք Գնունեաց գաւառին»։ Սեբեոս, էջ 65, 125։ Արճեշը բյուզանդացիները կոչում էին Arze, իսկ արաբները՝ Arjis (տե՛ս Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, էջ 195)։

104 V. Cuinet. La Turquie d'Asie, 2, էջ 710։ XIX դարի կեսերին դեռ քաղաքի որոշ մնացորդներ նշմարվում էին Մատնավանք (Մատղավանք?) գյուղի մոտ։ Տե՛ս նաև Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 49։

105 Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 123—128։ Թովմա Արծրունի, էջ 3, 82. «զբերդն Երիկաւ Հաղացովտի»։ Երիկավը ոչ թե Վասպուրականում էր, այլ՝ Տուրուբերանում։

106 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23, (§ 35)։

107 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 33։

108 Բ. Հ. Հարությունյան. Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույցի» (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, հմր. 3, էջ 112—113)։

109 Սեբեոս, էջ 76. «...մինչև ցեղը ծովուն Բզնունեաց և ցԱռեստաւան», էջ 84։ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68. «...ի լեռնէն որ կոչի Ընծաքիսար մինչև ցԱռեստն աւան և ցՀացիւն»։

անցնում էր Բյուզանդիային։ Իրապես վերջինս Վասպուրականում տարածքային ձեռքբերումներ չուներ, պարզապես Աղիովիտ գավառն ամբողջությամբ անցել էր կայսրությանը։

Այսօր ընդունված է Աղիովիտ գավառը կամ ավելի ճիշտ Վասպուրականին վերագրվող հատվածը ամբողջությամբ համարել արքունի սեպուհների սեփականություն[110]։ Երկու Աղիովիտների առանձին գոյությունը բացառելուց հետո հասկանալի է դառնում, որ հիշյալ գավառը հողատիրության իմաստով բավականին խայտաբղետ կառուցվածք է ունեցել։ Ամենից առաջ Աղիովիտի նշանակալից, գուցե և մեծ մասը կազմել են արքունի սեպուհների կալվածները, սակայն ակնհայտ է, որ դրանց մեջ չի մտել «արքունի քաղաք Զարիշատը» իր հարակից տարածքներով։ Վերջինս անտարակույս արքունիքի անմիջական ենթակայության տակ գտնվող տիրույթ էր, ուստի միանգամայն անհասկանալի է, երբ որոշ ուսումնասիրողներ Զարիշատը ցույց են տալիս Գնունիների տիրույթներում[111], քննության առնելով Պատմահոր տեղեկությունները, Ն. Ադոնցը եկել է այն եզրակացության, որ Գնունիները սկզբում տիրույթներ են ունեցել Շահապիվանի շրջանում, որոնք հետագայում անցել են Արշակունիներին[112]։ Հասկանալի է, որ Թովմա Արծրունու հաղորդումն այն մասին, թե է «զԱրձէշ քաղաք Գնունեաց գաւառին»[113], ուսումնասիրողներին բերել է այն մտքին, որ արքունիքը Շահապիվանի և ընդհանրապես Ծաղկոտն գավառի գիմաց Գնունիներին է հանձնել Աղիովիտը կամ նրա մի մասը։ Ժամանակին մենք ևս կիսել ենք այդ տեսակետը, սակայն սկզբնաղբյուրների համադրությունն ու վերլուծությունը, կարծում ենք, նոր լույս է սփռում հիշյալ հարցի վրա։ Այսպես, Մովսես Խորենացին հաղորդում է, որ երբ Արշակ II թագավորը Կոդովիտ գավառում մեծ որս է կազմակերպում և տոնախմբություն սարքում, Ծիրիթ և Վարդան իշխանները արքայի միտքը պղտորում են «ասելով, Գնելոյ բազում երէս քան զայն ունել ընդ նոյն աւուրս յիւրում լերինն, որ Շահապիվանն անուանի, որ ի մայրենի հաւոյ իւրոյ Գնելոյ Գնունւոյ հասեալ էր ցնա»[114]։ Առաջին հայացքից դրան խիստ հակասող տեղեկություն է պարունակում Փավստոս Բուզանդի երկը։ Պատմիչը, անդրադառնալով նույն իրադարձություններին և Արշակ II արքայի ու Գնել Արշակունու փոխհարաբերություններին, հայտնում է, որ Շահապիվանը Հայ Արշակունիների արքունի մշտական զորակայանն էր. «Եւ էր բանակ թագաւորին (Արշակ II-ի—Հ. Բ.) ի Շահապիվանի ի բուն բանակի տեղոն Արշակունեացն ի ներքոյ Սիւնեացն և ի վերայ ասպարիսացն»[115]։ Երկուսից մեկը. կամ սխալվում է պատմիչներից մեկը կամ էլ հիշյալ փաստերը պետք է նոր մեկնաբանություն ստանան։ Մեր կարծիքով, պատմիչների մոտ սխալ չկա։ Երբ խոսքը վերաբերում է արքունի բանակի բուն զորակայանին, ապա այն այդպիսի հոչակ կարող էր ձեռք բերել երկարատև գոյության դեպքում, ուստի Փավստոսի հաղորդման ճշմարտացիությունը կասկածներ չի կարող հարուցել։ Ինչ վերաբերում է Մովսես Խորենացու հաղորդմանը, ապա պետք է ուշադրություն դարձնել այն իրողության վրա, որ Գնել Արշակունին որս է կատարել ոչ թե Շահապիվանում, այլ Շահապիվան կոչվող լեռան վրա, որը հավանաբար Ծաղկանց լեռների նշանավոր լեռնագագաթներից մեկն էր։ Այսօր Ծաղկանց լեռներում Աղիովիտի սահմանակցության վրա կա երեք լեռնագագաթ՝ Ալադաղ, Խոնդքար և Ամդաղ։ Առաջինը, թեև փորձեր են արվել նույ-

---

110 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 33։

111 Ս. Տ. Երեմյան. Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298—385 թթ.), քարտեզ, գ—5։

112 Н. Адонц, Указ. соч., с. 304.

113 Թովմա Արծրունի, էջ 478։

114 Մովսես Խորենացի, էջ 283—284։

115 Փավստոս Բուզանդ, էջ 117։

նացնելու Ծաղկեռ լեռան[116] հետ, իրականում Աղի լեռն է[117], երկրորդը, մեր կարծիքով, ոչ այլ ինչ է, բայց եթե Շահապիվանի լեռը և վերջապես վերջինը Ծաղկեռ լեռն է, եթե իհարկե այն նույնական չէ Շահապիվանի լեռնագագաթի հետ։ Եթե մեր ենթադրությունը համապատասխանում է պատմական ճշմարտությանը, ապա Շահապիվանի լեռան հարավային լանջերը պետք է պատկանեին Գնունիներին, որտեղ և գտնվում էին Գնել Արշակունու որսատեղերը։ Այլ խոսքով, ոչ մի տարածքային փոխանակություն էլ տեղի չէր ունեցել և ի սկզբանե Գնունիները իշխում էին Աղիովիտի մի մասին։ Հիմնվելով այն փաստերի վրա, որ Զարիշատը արքունի քաղաք էր և Գնունիները որսատեղեր ունեին Շահապիվանի լեռան շրջանում, մենք դալիս ենք այն եզրակացության, որ Գնունիների տիրույթները գտնվելու էին Աղիովիտի հյուսիս-արևմտյան հատվածում, իսկ Թովմա Արծրունու տեղեկությունը Արճեշ քաղաքը նրանց պատկանելու վերաբերյալ՝ ուշ ժամանակների կացության արդյունք, երբ Արճեշը իրոք հայտնվել էր հիշյալ նախարարական ընտանիքի տիրույթներում։ Աղիովիտը ավելի ուշ ժամանակներում ավելի շատ հայտնի էր Արճիշո գավառ կամ Քաջբերունիք[118]։

«Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրության մեջ Տավրուբերան աշխարհի նկարագրությունը ավարտվում է Ապահունիք գավառով, որի տեղադրությունը երբեք կասկածներ չի հարուցել։ Փավստոս Բուզանդի մի տեղեկության համաձայն հայոց Տիրան թագավորի որսատեղիներից մեկը գտնվում էր «յերկրին Ապահունեաց, յոտինն մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որսասցուք, տեղւոյն՝ որում անուն կոչի քաղաք Աղիորսք»[119]։ Թովմա Արծրունին պարզորոշ հավաստում է, որ գավառը գտնվել է Խլաթից հյուսիս[120] և որ ուշ ժամանակներում նրա մեջ է եղել Մանազկերտ քաղաքը[121]։ Մեկ այլ տեղեկությամբ Ապահունիքը համարվում է Բզնունյաց ծովին մերձակա գավառ. «(Հայոց Սմբատ Ա թագավորը—Հ. Բ.) գնացեալ ընդ եզր ծովուն Բզնունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոխոմացն»[122]։ Այս տվյալներին ավելանում է «Աշխարհացույցի» շատ հետաքրքիր այն տեղեկությունը, որ Արածանին հոսում էր Ապահունիքի միջով[123] և ոչ թե արևմտյան սահմանագլխով[124]։ Ամփոփելով բերված նյութը, գժվար չէ որոշել Ապահունիքի սահմանները։ Հարավում դրանք անցել են Նեխ-Մասիքից արևմուտք ձգվող լեռնաճյուղով, արևմուտքում՝ Արածանիից արևմուտք գտնվող ջրբաժան ոչ բարձր լեռներով, հյուսիսում՝ Ծաղկանց լեռների հյուսիս-արևմուտք երկարող լեռնաբազուկով, իսկ արևելքում՝ Աղի լեռնանցքով ու Աղի և Բագնոց (այժմ՝ Բագիշան) գետերի ջրբաժանով։ Գավառը պատմության մեջ հիշվում է բազմիցս։ Ասողիկը հավաստում է, որ X դարում Ապահունիքը պատկանում էր արաբ ամիրաներին, որոնց կենտրոնը Մանազկերտ քաղաքն էր[125]։ Բյուզանդական հե-

---

116 Թ. Խ. Հակոբյան, Ատ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Բ, Երևան, 1988, էջ 838։

117 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 33։

118 Աշխարհացույց Վարդանայ վարդապետի, էջ 18. «Աղիովիտ եւ Քաջբերունի Արճեշ է, ուր կան սուրբ ուխտքն Արծուաբեր եւ Մեծոփ... եւ Ուռընկայրն, ուր կայ սուրբ նշանն ամենազօր» (տե՛ս նաև էջ 37)։

119 Փավստոս Բուզանդ, էջ 51։ Մատենադարանի աշխատակից Գեորգ Տեր-Վարդանյանը իրավացիորեն սրբագրում է այս հատվածի վերջնամասը։ Ելնելով այն ճիշտ մտքից, որ որսատեղում հազիվ թե քաղաք գտնվեր, նա ենթադրում է, որ այն եղել է ոչ թե «քաղաք Աղիորսք», այլ «Քաղքաղի որսք»։

120 Թովմա Արծրունի, էջ 200. «Բուհայ եկն եմուտ ի Խլաթ քաղաք, ճանապարհ արարեալ ընդ կողմն Ապահունեաց»։

121 Նույն տեղում, էջ 348։

122 Նույն տեղում, էջ 366։

123 Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, էջ 31։

124 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», քարտեզ Գ—5։

125 Ասողիկ, էջ 183։ Տե՛ս նաև էջ 45, 69, 73, 87, 115, 192, 199, 247, 248, 266, 269—271։

զինակները այն գիտեն Ἀπαγουνής, իսկ արաբականները՝ Bajunais գրությամբ[126]։ Հայկական վաղ միջնադարի աղբյուրներում հիշատակվում է մեծ մասամբ Ապահունեաց նախարարական ընտանիքը։

Ապահունիքի կարևոր բնակավայրերից էին ամենից առաջ Մանազկերտ քաղաքը (ուշ շրջանում), Դալարիս կամ Ածուղ (Արծուղ, Արձկաղ) գյուղը, որտեղ կուրացվեց հայոց Տիրան թագավորը[127], Խարճտոնք գյուղը, Սմբո գյուղը, Խոսոնսը և Թոնդրակը[128]։

«Աշխարհացույցի» համառոտ խմբագրության ձեռագրերը պահպանել են ևս երկու գավառի անուն՝ Կոր կամ Կորի և Խորխոռունիք։ Կորի գավառը, «Աշխարհացույցից» զատ, Հարքի և Ապահունիքի հարևանությամբ, հիշատակում է նաև Կոստանդին Ծիրանածինը. «Բայց Սանցիկիերտ ամրոցը, Ապախունի երկիրը, Կորին և Խարկան ևս գտնվում էին իշխանաց իշխանի (իմա՝ Սմբատ I— Հ. Բ.) գերիշխանության և տիրապետության ներքո»[129]։ Հավանաբար, նույն գավառին է վերաբերում Թովմա Մեծոփեցու հիշատակած «Կորոյ ձորը», որը Ղ. Ինճիճյանը հակված է տեղադրելու Արճեշի կողմերում[130]։ Ղ. Ալիշանը Կորին տեղագրում է Լիզի շրջանում, սակայն ինքն էլ վստահ չէ այդ տեղորոշմանը[131]։ Հ. Հյուբշմանը ենթադրում է, որ գավառանունը թերևս պահպանել է Բուլանուխի գետը կամ Քյոր-սուն[132]։ Այս տեղադրությունը հետագայում պաշտպանել են Ն. Ադոնցը[133] և Ս. Երեմյանը[134]։ Վերջինիս կարծիքով Կորի գավառը ընդգրկել է «Կորոյ ձոր» գետի հովիտը Խաչի (ներկայումս՝ Խաչլու) լճի ավազանով հանդերձ։ Այս տեղադրությունը, որ շատ հիմնավոր է, հակասության մեջ է մտնում Բզնունիքի տեղորոշման հետ, որովհետև ստացվում է, որ Կորին, տարածքային առումով, պարզապես Բզնունիքի մի մասն է։ Այս իրողությունը «Աշխարհացույցի» ամենահետաքրքիր առանձնահատկություններից մեկն է։

Խորխոռունիքը որպես գավառ «Աշխարհացույցից» բացի որևէ մեկ այլ սկզբնաղբյուրում չի հիշատակվում։ Բոլոր հեղինակները այն գիտեն որպես նախարարական ընտանիք[135]։ Ղ. Ալիշանը այն տեղադրում է Բուլանուխում[136], Հ. Հյուբշմանը՝ Կորիի և Ապահունիքի միջև[137], Ն. Ադոնցը՝ Բուլանուխում, Բզնունիքի և Կորիի միջև, Նազիկ լճի շրջակայքում[138], իսկ Ս. Երեմյանը՝ Բզնունիքից հյուսիս և Արծկեից արևելք ընկած շրջանում և ենթադրում է, թե «Աշխարհացույցի» հետագա խմբագիրներն են ավելացրել, իմանալով, որ Խորխոռունիների տոհմական գավառն է եղել նույն Բզնունիքը»[139]։ Մեր քննության

---

126 Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները, էջ 196։

127 Փավստոս Բուզանդ, էջ 52—53։

128 Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 129—130։

129 Կոստանդին Ծիրանածին, էջ 11. μετὰ τῆς χώρας τοῦ Ἀπαγουνὴς καὶ τοῦ Χαρκὰ καὶ τοῦ Κορτῆ։

130 Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 524։

131 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23 (§ 35)։

132 Հ. Հյուբշմանն, Հին Հայոց տեղվո անունները, էջ 197։

133 Н. Адонц. Указ. соч., с. 313.

134 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 313։

135 Փավստոս Բուզանդ, էջ 29, 104։ Եղիշե, էջ 43, 74, 99, 116, 119, 150։ Ղազար Փարպեցի, էջ 47, 64, 65, 67, 72։ Մովսես Խորենացի, էջ 38, 110, 267, 312, 314։ Սեբեոս, էջ 133, 143, 165 և այլն։

136 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 23 (§ 35)։

137 Հ. Հյուբշմանն. Հին Հայոց տեղվո անունները, էջ 197։

138 Н. Адонц. Указ. соч., с. 313. Հեղինակը և՛ Կորիի, և՛ Խորխոռունիքի տեղադրությունը համարում է զուգակցություն, բանի որ «Աշխարհացույցը» նրանց տեղադրության վերաբերյալ ցուցումներ չի պահպանել։

139 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 55։

լույս տակ այս տեղադրությունն, անշուշտ, ընդունելի չէ։ Խորխոռունիք գավառ որպես այդպիսին չի եղել և խմբագիրների ստեղծագործության արգասիքն է, իսկ Խորխոռունիների տիրույթները գտնվել են Հարքում՝ Արածանի գետի աջափնյակում։ Խորխոռունիները որպես ձեռական իշխանության երկիր արքունիքից ստանում էին հավանաբար Հեր և Զարավանդ գավառների շրջանը։

Տավրուբերանի նկարագրությունը, չնայած Մեծ Հայքի մի շարք աշխարհների նկատմամբ իր մանրակրկիտությանը, ունի մի շարք հակասություններ, որոնք ոչ միայն վկայում են նրա ոչ անաղարտ լինելու և խմբագրման ենթարկվելու մասին, այլև, մեր կարծիքով, հնարավորություն են տալիս վերականգնելու նրա նախնական վիճակը։ Համաձայն «Աշխարհացույցի» ընդարձակ և համառոտ խմբագրությունների, Տավրուբերանն ունեցել է 16 գավառ, սակայն եթե համառոտում իրոք թվարկվում են 16 գավառանունն էլ, ապա ընդարձակ խմբագրության մեջ, ինչպես արդեն նշեցինք, հականե հանվանե հիշատակվում են և նկարագրվում միայն 14-ը, ըստ որում առաջին երկու գավառները՝ Խոյթը և Ասպակունյաց ձորը, պարզապես թվարկվում են։ Համառոտ խմբագրության Կորի և Խորխոռունիք գավառանունները ընդարձակ խմբագրության մեջ ընդհանրապես բացակայում են, իսկ նշված գավառների տարածքները, քանի որ նախորդ գավառների տեղադրությունից հետո ազատ տեղ չի մնում, հայտնվում են Հարքի և Բզնունիքի մեջ։ Ուստի, եթե ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ երկու խմբագրություններն էլ Տավրուբերանին վերագրում են 16 գավառ, ապա առաջին տպավորությունն այն է, որ վերոհիշյալ գավառանունները ընդարձակ խմբագրության մեջ բացակայում են գրիչների անփութության կամ ձեռագրի վնասվածության պատճառով։ Սակայն, ինչպես արդեն վերը նշվեց, Տավրուբերանին 16 գավառ վերագրելու կողմնակիցներից մեկը՝ Ս. Երեմյանը լուրջ կասկածներ ունի, որ Տավրուբերանի նկարագրության մեջ Խորխոռունիք գավառի անունը ավելացվել է «Աշխարհացույցի» խմբագիրների կողմից։ Այդուհանդերձ այնքան մեծ է եղել գավառների թվաքանակի հմայքը, որ նա այնուամենայնիվ փորձել է բնագիրը հարմարեցնել գավառաքանակին՝ ընդարձակ խմբագրության մեջ կատարելով սրբագրումներ և մուծելով Կորի ու Խորխոռունիք գավառանունները. «Որոյ ըստ հիւսիսոյ Աղիովիտ գաւառ, եւ զմտիւք նորա Ապահունիք. ընդ որոյ մէջն անցանէ Արածանի [եւ ի հարաւոյ նորա՝ Կորի]։ [Եւ] յեզրն [ծովին] Բզնունեաց [է Խոռխոռունիք գաւառ]»[140]։ Վերը կատարված քննությունը և մասնավորապես Կորիի և Խորխոռունիքի տեղադրությունը, մեր համոզմամբ այս սրբագրությունը դարձնում են անհնարին, քանի որ ոչ մի հեղինակ իր նկարագրած գավառների տարածքում չէր փորձի տեղադրել մեկ այլ գավառ։ Եվ վերջապես, եթե հիշյալ գավառները իրոք տեղ գտած լինեին ընդարձակ խմբագրության նկարագրության մեջ, ապա ենթադրելի է դրանց հիշատակությունը ոչ թե նկարագրության վերջում, այլ միջնամասում, որտեղ Հարքի նկարագրությանը պետք է հաջորդեր թերևս, «որ է Խոռխոռունիք» արտահայտությունը և այնուհետև Կորիի հիշատակությունն ու դիրքի պարզաբանումը։ Իհարկե, հեղինակը իր բնագրային մուծումները այս տեսքով կարող է հիմնավորված համարել, հենվելով համառոտ խմբագրության մեջ գավառների թվարկման հերթականության վրա, որտեղ Կորին և Խորխոռունիքը ամենավերջին գավառներն են[141]։ Սակայն երբ Տավրուբերանի առաջին 14 գավառների տեղադրությունից հետո այլևս հիշյալ աշխարհում ազատ տարածք չի մնում, մնում է ենթադրել, որ Կորին և Խորխոռունիքը համառոտ խմբագրության մեջ ավելացվել են հետագայում։ Ինչ վերաբերում է գավառների թվաքանակին, ապա ընդարձակի մեջ 16 թիվը պետք է համառոտ խմբագրության ազդեցություն համարել։ Ավելի ուշ շրջանում գրիչներից մեկը՝ ծանոթ լինելով համառոտ խմբագրության մեջ հանդիպող 16 գավառանուններին, գա-

---

140 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 108։

141 Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 349։ К. П. Патканов. Армянская Географ ия VII века, с. 18.

վառաքանակը վերջինիս նմանությամբ դարձրել է 16, առանց բնագրային փոփոխություններ ու մուծումներ կատարելու։

Եվ այնուամենայնիվ, քանի՞ գավառ է ունեցել Տավրուբերանը։ Մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ հիշյալ աշխարհի գավառաքանակը 14 էլ չէր։ Ընդարձակ բնագրի թռուցիկ ծանոթությունն անգամ ցույց է տալիս, որ բացառությամբ Խույթի և Ասպականույց ձորի, մնացած բոլոր գավառների տեղադիրքը ճշտվում է կամ հարևան վարչական միավորի համեմատությամբ կամ էլ աշխարհի կողմերը կամ աշխարհագրական այս կամ այն կետը (լեռ, լեռնաշղթա, գետ, լիճ) հիմք ընդունելով։ Այս իրողությունը իրավունք է տալիս ենթադրելու, որ Խույթն ու Ասպականույց կամ Ասպակունյաց ձորը նույնպես ավելի ուշ շրջանի մուծում են, կատարված, սակայն, «Աշխարհացույցի» հեղինակի կողմից։

Աղձնիքի քննության ժամանակ մենք ցույց ենք տվել, որ III դարում, երբ պարսիկները ժամանակավոր տիրացան Հայկական Տավրոսից հարավ ընկած շրջաններին, հայոց արքունիքը բանակցությունների ընթացքում կարողացավ իր վերահսկողության տակ պահել Հայկական Տավրոսի լեռնանցքներն ու հարավահայաց լանջերի նրանց մերձակա տարածքները։ Այդ պատճառով էլ բնաշխարհագրական տեսակետից Աղձնիքին հարող և Տավրոսի հարավային փեշերին գտնվող հիշյալ երկու գավառները հայտնվեցին Տավրուբերանի մեջ, կապված ոչ թե վարչական բաժանման անհրաժեշտության, այլ քաղաքական որոշակի կացության հետ։ Դժվար է ասել, թե Ասպակունյաց ձորը կամ Խույթը մինչև Տավրուբերանին անցնելը եղել են առանձին գավառներ, թե Սանասունքի մաս են կազմել։ Սակայն առավել հավանական է, որ արդեն III դարում դրանք առանձին վարչական միավորներ էին, որոնցից առաջինը մինչև Տավրուբերանի մեջ մտնելը Աղձնյաց բդեշխությանը ենթակա նախարարություն էր, իսկ երկրորդը՝ տոհմացեղային կյանքով ապրող իշխանություն։

Տավրուբերանի մյուս գավառների կապակցությամբ կարելի է ենթադրել, որ դրանց մի մասը սկզբնապես գոյություն չի ունեցել և ձևավորվել է ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով։ Անտարակույս է, որ վաղնջական ժամանակներում Բգնունիքի մաս պիտի կազմեր Օրևարքը, որի հետագա հանգես գալը սկզբնաղբյուրների բացակայության պատճառով դժվար է բացատրել։ Չի բացառվում, որ այն կարող էր Աղձնիքի մաս կազմել, երբ դեռ վերջինիս մեջ էր Մոկքը, և III դարի իրադարձությունների հետևանքով անջատվելով Աղձնիքից վերածվել էր առանձին գավառի։ Բնական է, որ այս բացատրության դեպքում բացառվում է հիշյալ գավառի վերաբերելը Բգնունիքին։

Ի մի բերելով նշված նյութերը և կատարված ենթադրությունները, կարելի է եզրակացնել, որ Տավրուբերանի գավառների սկզբնական քանակը, երբ Հարքը արդեն տրոհվել էր մի քանի գավառների, հավանաբար 9-ից չէր անցնում, որոնք էլ համապատասխանում էին Պլինիոս Ավագի հիշատակած զորավարություններին։ «Աշխարհացույցը» V դարում արձանագրել է արդեն 14 գավառ, որից Խույթը և Ասպակունյաց ձորը նախապես պետք է պատկանեին Աղձնիքին, իսկ համառոտ խմբագրության մեջ մատուցվում է 16 գավառ, որոնցից վերջին երկուսից Կորին հանդես էր եկել V դարից հետո և գոյություն ուներ X դարում, իսկ Խորխոռունիքը, դատելով մատենագիտական նյութից, այդպես էլ ինքնուրույն գավառի չվերածվեց։

ОБЛАСТЬ ТАВРУБЕРАН (ТУРУБЕРАН) ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО «АШХАРАЦУЙЦУ» («АРМЯНСКОЙ ГЕОГРАФИИ»)

Доктор истор. наук БАБКЕН АРУТЮНЯН

Резюме

Тавруберан или Турубераи являлся одной из наиболее знаменитых областей Великой Армении, состоящей, согласно «Ашхарацуйцу», из 16 гаваров или кантонов. Рассматривается ряд вопросов, связанных с локализацией гаваров, владений княжеского рода Гнуни, феодализацией и административным развитием области. По нашему мнению, первоначально область состояла из 9 гаваров или стратегий, соответствовавших префектурам Плиния Старшего, в дальнейшем их число достигает 12, а после событий III века—14. Гавар Кор появляется позже, а гавар под названием Хорхоруник так и не сформировался. В отличие от общепризнанного мнения, владения рода Хорхоруни находились не на северо-западном побережье Ванского озера, а в северной части гавара hАрк, как повествует «История Армении» Мовсеса Хоренаци.